



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0019 Երևան, Մ. Բաղրամյան 19, հեռ. (+374 11) 888-107, 888-146, էլ. հասցե՝ intrel@armsai.am

№ ՂԿԵ-466

«25» 09 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Տ.ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խաչատրյան

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 23-ի N 02/16.16/32788-2021 գրության, Ձեզ եմ ներկայացնում 2022 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի ծախսային ծրագրով նախատեսված ծախսերի ընդհանուր մեծությունը, նպատակների և ակնկալվող վերջնական արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն:

Առդիր 6 էջ և կրիչ:

Հարգանքով՝

Լ.ՅՈՒՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

ՀՀ հաշվեքննիչ պալատը, 2020թ. օգոստոսի 7-ի թիվ 151-Լ որոշմամբ, հաստատել է Հաշվեքննիչ պալատի 2020-2023 թվականների զարգացման ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների պլանը, որում ամրագրված են Հաշվեքննիչ պալատի առաքելությունը, տեսլականը, արժեքները, սկզբունքները, կարիքները, ինչպես նաև քառամյա նպատակային թիրախները: Փաստաթուղթը մշակվել է Եվրոպական Միության և Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության ՍԻԳՄԱ ծրագրի տեխնիկական աջակցությամբ:

Ռազմավարությունը բաղկացած է 4 ռազմավարական նպատակներից, որի իրագործման միջոցառումների պլանով սահմանվել է 13 ենթանպատակ և 78 միջոցառում: Համաձայն Հաշվեքննիչ զարգացման ռազմավարական ծրագրի.

i. Առաքելություն

Հաշվեքննիչ պալատի առաքելությունն է նպաստել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանրային բարիքն օրինական և արդյունավետ ճանապարհով բաշխելու գործընթացին: Դրան հասնելու համար Հաշվեքննիչ պալատը ժամանակին, ինչպես նաև մասնագիտական և անկողմնակալ ճանապարհով հաշվեքննության արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում ԱԺ-ին և հանրությանը:

ii. Տեսլական

Հաշվեքննիչ պալատը ձգտում է լինել Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներին համահունչ գործող բարձրագույն հաշվեքննիչ մարմին:

iii. Արժեքներ և սկզբունքներ

Հաշվեքննիչ պալատի արժեհամակարգի առանցքը հանրությանն օգտակար լինելն է:

Այս նպատակով Հաշվեքննիչ պալատը պետք է ամրապնդի հետևյալ արժեքները՝

- Անկախություն
- Թափանցիկություն և հաշվետվողականություն
- Բարեվարքություն
- Համապատասխանություն (բարձր որակի սահմանարդրությանը և օրենքներին համապատասխան հաշվեքննություններ):

Հաշվեքննիչ պալատն իր արժեհամակարգը պահպանելու և ամրապնդելու նպատակով առաջիկա երեք տարիներին կղեկավարվի է հետևյալ սկզբունքներով.

- Ամրապնդել և պաշտպանել անկախությունը (Հաշվեքննիչ պալատը կարող է արդյունավետ գործել, եթե վերջինս ունի բավարար անկախություն INTOSAI ստանդարտներին համապատասխան):
- Իրականացնել ռիսկերի վրա հիմնված հաշվեքննություն (նպատակն է հավաստիանալ, որ հանրային ռեսուրսներն օրինական և արդյունավետ կերպով են օգտագործվում):
- Իրականացնել արդյունավետ և ազդեցիկ հաշվեքննություն (նպատակն է հավաստիանալ, որ հաշվեքննության հետևանքներն անարձագանք չեն մնում, հաշվեքննության օբյեկտներն ընդունում և իրագործում են Հաշվեքննիչ պալատի առաջարկությունները, վերացնում են Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված անհամապատասխանություններն ու խեղաթյուրումները):
- Հանրայնացնել հաշվեքննության արդյունքները (նպատակն է բարձրացնել հաշվեքննության օբյեկտների պատասխանատվությունը հանրության առջև):
- Ժամանակին արձագանքել հանրային կյանքում փոփոխվող միջավայրին, նոր մարտահրավերներին, հակակոռուպցիոն պետական քաղաքականությանը (նպատակն է հաշվեքննության գործընթացը ներդաշնակեցնել հանրության ակնկալիքներին և պահանջներին՝ պահպանելով անկախությունն ու ինքնուրույնությունը):

- Արդյունավետորեն համագործակցել բոլոր շահառուների հետ (նպատակն է լինել հասկացված, պահանջված և գնահատված, ինչպես նաև լինել տեղեկացված՝ պահպանելով քաղաքական չեզոքություն):
- Բարձր վստահություն ձեռք բերել (նպատակն է ձեռք բերել իրապես անկախ հաշվեքննիչ մարմնի համբավ, որը կնպաստի հանրային կյանքում դրական փոփոխությունների):
- Ապահովել անհրաժեշտ մակարդակի թափանցիկություն և հաշվետվողականություն (նպատակն է ամրագրել այնպիսի մեխանիզմներ, որոնք «բաց եղանակով կվկայեն, որ Հաշվեքննիչ պալատը գործում է օրինականության, ինչպես նաև խնայողության, օգտավետության և արդյունավետության սկզբունքներին համաձայն):
- Հաշվեքննիչ պալատը կառավարել արդյունավետ (նպատակն է ստեղծել որակի կառավարման, հսկողության այնպիսի համակարգեր, որոնք կերաշխավորեն Հաշվեքննիչ պալատի «լավ» կառավարումը):
- Պահպանել վարքագծի կանոնները (նպատակն է բացառել հաշվեքննության ընթացքում հանրային և մասնավոր շահերի բախումը, ինչն իր հերթին կամրապնդի հասարակության վստահությունը Հաշվեքննիչ պալատի նկատմամբ):
- Ձգտել որակի ամենաբարձր չափորոշիչներին (նպատակն է բացառել Հաշվեքննիչ պալատի համբավի վերաբերյալ որևէ բացասական կարծիքներն ու գնահատականները, որոնք կարող են ստվեր նետել հաշվեքննության գործընթացի վրա):
- Ուժեղացնել մարդկային ներուժը (նպատակն է գիտելիքի ստացման, նորորարությունների և փորձի փոխանակման մեխանիզմներով պահպանել որակն ու լինել անթերի):

- iv. Ռազմավարական նպատակները
1. Իրավական դաշտի բարելավում
 2. Հաշվեքննության ազդեցության բարելավում
 3. Մասնագիտական կարողության և հաշվեքննության հմտությունների արդիականացում
 4. Հաղորդակցման և համագործակցության ուղիների հզորացում

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակն է հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելը:

Նպատակային թիրախներն ապահովելու Հաշվեքննիչ պալատը ձգտում է մինչև 2024 թվականը հասնել վերջնական արդյունքների հետևյալ ուղղություններում.

- Արտաքին պետական հաշվեքննության ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը բարելավում՝ նկատի ունենալով INTOSAI ստանդարտներով սահմանված ֆինանսական, գործառնական և կազմակերպչական անկախության հարցերը:
- Հաշվեքննության գործընթացի որակի բարձրացում՝ նկատի ունենալով նաև Հաշվեքննիչ պալատի SS ենթակառուցվածքների զարգացման հարցերը:
- Հաշվեքննիչ պալատում մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում:
- Ազգային ժողովի, կառավարության և այլ շահառուների հետ համագործակցության զարգացում՝ հատկապես նկատի ունենալով հաշվեքննությունից հետո տարվող աշխատանքները՝ follow-up գործընթաց:

Իր նպատակների հասնելու համար Հաշվեքննիչ պալատը իրականացնում է գործառույթներ, որոնց վերջնական արդյունքի վերաբերյալ գնահատական կարող է հանդիսանալ Հաշվեքննիչ պալատի կատարողականի ինքնագնահատումը:

Համաձայն INTOSAI կողմից սահմանված պահանջների, Աուդիտի բարձրագույն մարմինների կատարողականի գնահատումն իրականացվում է 3-5 տարին մեկ:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները				
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը	
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը
Հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համանքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների և վարկերի, պետական և համանքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն	1161	ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության տարեկան ծրագրի կատարողականը՝ Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) մեթոդաբանության հիման վրա (SAI PMF)	Գնահատականը 2	2021թ.	Ակնկալվող գնահատականը 3-4 միջակայքում	2024թ.

ՄԱՍ 4. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի դասիչը	Ծրագրի անվանումը
1161	Հանրային ֆինանսների և սահմանափակված ռազմավարական հաշվեքննություն

Ծրագրի միջոցառումները

Ամփոփ/բացված	Բացված			
Պետական մարմնի (կատարող) գերատեսչական դասիչը՝	105034			
Պետական մարմնի (կատարող) անվանումը՝	ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ			
Ծրագրի դասիչը՝	1161	Ցուցանիշներ		
Միջոցառման դասիչը՝	11001	2020թ. փաստացի	2021թ. սպասվող	2022թ.
Միջոցառման անվանումը՝	Հաշվեքննիչ պալատի գործունեության և հաշվեքննության իրականացման ծառայություն:			
Նկարագրությունը՝	Հաշվեքննիչ պալատի գործունեության հաշվեքննիչ պալատի բնականոն գործունեության ապահովմանը և հանրային ֆինանսների և սահմանափակված ռազմավարական հաշվեքննության ոլորտում օրենքով սահմանված կարգով հաշվեքննության ուղղված միջոցառումներ:			
Միջոցառման տեսակը՝	Ծառայության մատուցում			
Միջոցառումներ իրականացնողի անվանումը՝	ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ			
Արդյունքի չափորոշիչներ				
Քանակական	Հաշվեքննությունների քանակ	41	69	69
Քանակական	Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի առաջին մասի շրջանակներում իրականացված հաշվեքննությունների քանակը		54	54
Քանակական	Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի առաջին մասի յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո չորս ամիս ընթացքում տրամադրված ընթացիկ եզրակացությունների քանակը		36	36

Քանակական	Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի երկրորդ մասի շրջանակներում իրականացված հաշվեքննությունների քանակը		15	15
Քանակական	Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի երկրորդ մասի շրջանակներում համայնքներում իրականացված հաշվեքննությունների քանակը		1	1
Քանակական	Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի երկրորդ մասի շրջանակներում կատարողականի հաշվեքննությունների քանակը		5	5
Քանակական	Պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության տրամադրում	1	1	1
Որակական	„Հաշվեքննիչ պալատ մասին„ ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի դրույթներին համապատասխանություն Այո/ոչ	Այո	Այո	Այո
Քանակական	Հաշվեքննիչ պալատի գործունեության վերաբերյալ տարեկան հախորդումներ քանակ	1	1	1
Որակական	„Հաշվեքննիչ պալատ մասին„ ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի դրույթներին համապատասխանություն Այո/ոչ	Այո	Այո	Այո
Քանակական	Հաշվեքննիչ պալատի գործունեության տարեկան ծրագրի կատարողականի ինքնագնահատման իրականացում, քանակ	1		
Որակական	Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) մեթոդաբանության հիման վրա (SAI PMF) Այո/ոչ	Այո		

Որակական	Հաշվեքննիչ պալատի գործունեության տարեկան կատարողականի ինքնագնահատման Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) SAI PMF իրականացված ինքնագնահատման արդյունքում տրված ամփոփ գնահատականը			
Քանակական	ԵԱՏՄ շրջանակներում անդամ պետությունների Աուդիտի բարձրագույն մարմինների հետ համատեղ հսկողական միջոցառումների քանակ, հատ	1	2	2
Որակական	ԵԱՏՄ արտաքին աուդիտի ստանդարտներին համապատասխանություն, Այո/Ոչ	Այո	Այո	Այո
Քանակական	Կին աշխատակիցների թիվը ընդամենը աշխատակիցների մեջ (%)		22	22
Քանակական	Տղամարդ աշխատակիցների թիվը ընդամենը աշխատակիցների (%)		78	78
Միջոցառման վրա կատարվող ծախսեր (հազար դրամ)		1025574.2	1109758.1	1028219.0

Ամփոփ/բացված	Բացված			
Պետական մարմնի (ԲՍԿ) գերատեսչական դասիչը	105034			
Պետական մարմնի (ԲՍԿ) անվանումը	ՀՀ հաշվեքննիչ պալատ			
Ծրագրի դասիչը	1161	Ցուցանիշներ		
Միջոցառման դասիչը	11002			
Միջոցառման անվանումը	Հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդ	2020թ. փաստացի	2021թ սպասվող	2022թ
	Հաշվեքննիչ պալատի գործունեության արդյունավետ իրականացման, աշխատանքների նպատակային խրախուսման համար, չկանխատեսված ծախսերի կատարման ապահովում			
Նկարագրությունը	Ծառայությունների մատուցում			
Միջոցառման տեսակը	ՀՀ հաշվեքննիչ պալատ			
Ծառայությունը մատուցող կազմակերպության(ների) անվանում(ներ)ը	Արդյունքի չափորոշիչներ			
		19006.9	18234.2	17537.7